ՄԻԸ.

Հնդկաստանի առաքեալ Ս. Ֆրանչիսկոս Քսաւերեանի սուրբ մարմնոյն շուրջ կը տրուի հոս զարմանալի տեղեկութիւն մը։

Գերապատիւ և ամենապայծառ տեառն Ստեփաննոս աբբային ևն

... այսօր վասն ճիզվիզթաց լուաք ի ճէնէրալէն Ֆրանչիսկանաց, զի ի Կօա քաղաքն հնդկաց անկեալն ընդ տէրութեամբ լուսիտանիոյ թշուառութիւն մեծ կրեցին ճիզվիթքն, քանզի ունէին զհոյակապ և զբազմագանձ եկեղեցի մի, ուր էր մարմին սրբոյն Ֆրանչիսկոսի քսաւերեանի. արդ՝ զսոյն եկեղեցիս ընդ այլոց առին ի ճիզվիթաց ամենայն գանձիւքն արժեցելովք զբազում միլիոնս. և ետուն զնոսա Ֆրանչիսկանաց չիգօլանթից. և որ հիացման արժանի է, այս է, զի զզգեստ ճիզվիթական հանեալ ի յանձնէ սրբոյն քսաւերիոսի վասն սաստիկ ատելութեան ճիզվիթաց, զգեցուցին նմա զսքեմ չիգօլանթից, ի ճմլումն և ի թալկացումն սրտի յիսուսեանց. յորմէ երևի թէ և զճիզվիթսն չարաչար արտաքսեցին։

1760 Մարտ 21 [Հռոմ]

Նուաստ ծառայ
Հ. Մկրտիչ [Անանեանց]

ՄԻԹ.

Էրզրումի և իր գաւառին, ինչպէս նաև Տիարպէքիրի հայկական կեանքի շուրջ տեղի ունեցած տխուր դէպքերու մանրամասն նկարագրութիւնը կը գտնենք վաւերաթղթիս մէջ։

Գերարգելի Հօր խնամ Հայր Աբբային, սրբագործ սուրբ աջն համբուրելով ծնրադրութեամբ, և կարի յոյժ կարօտիւ և ամենամեծ սիրով ողջոյն մատուցանելով և խնդրելով զօրհնութիւն

... բազում հանդէպք վիշտք նեղութիւնք և զանա[զա]ն տանջանք պաշարեցին ինձ և բոլոր խոտրջրոյ ժողովրդեան իմոյ և նահանգին նորին, որ ոչ կարեմ գրով ծանուցանել հայրութեան ձերում. իրաւի եղեալ եմք որպէս զմոլորեալ հաւք։ Նախ ծանիք որ մեր ախզխայու փաշան սպաննեցին հերու թագաւորի հրամանաւ, Էրզրումու իպրահիմ փաշան եկաւ նստաւ ի տեղի նորա. այնքան սաստիկ զուլում երաւ յերկրի մերում, որ բոլոր աղքատքն իբր հրով այրեց ի ձեռն մեծամեծ հարկապահանջութեան և սալիանի, այնքան անողորմաբար հարկանէր դառն աղքատաց՝ որ անսզայ քարերն և փայտերն իբր զուլային և կաղաղակէյին ի միասին. ոչ եզ մնաց ոչ տաւար և ոչ տան աշխայ, բոլոր վաճառուեցան, ես մէկ քանիմ օրով յառաջ յելայ գիւղէն եկի էրզրում, յետևէս բոլոր գիւղն յելան և քոչեցին. Ձ տուն էրզրում եկին. Ծ տուն իսպիր գնացին, և միւսնքն, ոմանք կիւմիշխանայ գնացին և ոմանք այլ տեղիս, և ես եղկելիս իմ ձեռաց մարդն յղեցի խոտրջուր յեկեղեցւոյս զարդն և զգերս ժողովել տուի, մնաց դատարկ գիւղն...։ Էրզրումու որպիսութիւն եթէ կամիք հարցանել նայ՝ ծանիք՝ քան զգիւղօրեայքն այլ յառաւել վատթար եղև, միջի թուրքերն չափէ ի դուս գազանացան, որ մարդ տնէն դուրս յելնել ու չուկայն երթալ չի կարել, զէրէ կսպաննեն, չարսու և թուքեան բոլոր գոցուեցան, շատ պէզրկեան սպաննեցին և բարիքն տարաւ։ Մանաւանդ որ երեք գազանաբարոյ փէյտահ եղան, մէկն ժամադռան մահալան և նոյն կողմն զաւթ էրաւ իբրև գերի, մէկն թարվէզու դռան կողմն, և մէկն էգնկու դռան կողմն։ Այսպէս շրջապատեալ պաշարեցին զքաղաքն. մնացին գառինքն ի մէջ գայլոց. քաղաքիս մէջ նեթ յանձմ